



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

6 փետրվարի 2020 թ.

N 36-Ն

ք. Ստեփանակերտ

ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երեխայի իրավունքների մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ղ ղ ու մ է.**

1. Հաստատել երեխայի իրավունքների պաշտպանության 2020 թվականի տարեկան ծրագիրը և ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում է»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՆ

Ք. ՎԱՀԱԳՅԱՆ

Հավելված N 1

Արցախի Հանրապետության
կառավարության 2020 թվականի
փետրվարի 6-ի N 36-Ն որոշման

ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխայի իրավունքների պաշտպանության 2020 թվականի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) մշակվել է «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակներն են՝

1. Սոցիալական պաշտպանության ոլորտում՝

1) կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովումը, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների բարելավումը, նշված հաստատություններում խնամվող երեխաների կյանքի որակի բարելավումը, նրանց ինտեգրումը հասարակությանը.

2) ընտանիքի և երեխաների հիմնահարցերի բնագավառում՝ ընտանիքի և երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ մինչև 18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի, դաստիարակության, ուսուցման, ֆիզիկական և մտավոր զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, անհրաժեշտ պահանջմունքների բավարարումն ու առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց բնակարանների (բնակելի տների) տրամադրումը և դրա կահավորումը:

2. Առողջապահության ոլորտում՝ երեխաներին բժշկական օգնության որակյալ և մատչելի ծառայություններով ապահովումը, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելման միջոցառումների իրականացումը՝ ուղղված մանկական մահացության և հիվանդացության ցուցանիշների նվազեցմանը:

3. Կրթության ոլորտում՝ կրթության համակարգի պահպանումը և շարունակական զարգացումը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որակյալ հիմնական կրթության ապահովումը, հանրակրթական դպրոցներում ներառական կրթության հնարավորության ապահովումը, սովորողների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարումը:

4. Մշակույթի ոլորտում՝ երեխայի գեղագիտական և ստեղծագործական կարողությունների զարգացումը, գեղագիտական դաստիարակությունը, ինչպես նաև մշակութային արժեքների ճանաչումն ապահովելը:

5. Անչափահասների արդարադատության ոլորտում՝ անչափահաս դատապարտյալների զբաղվածության ապահովումը:

Ծրագրի խնդիրներն են՝

Մտնից N: _____
20 թ.